Մրցույթի հայտարարություն

ՀՀ Արագածոտնի մարզի Օհանավանի Ս. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ում սննդի ոլորտում գործունեության կազմակերպման իրավունքի տրամադրման համար

ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 914-Ն որոշմամբ հաստատված հավելված N 2-ի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմը հայտարարում է մրցույթ «ՀՀ Արագածոտնի մարզի Օհանավանի Ս. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում սննդի ոլորտում գործունեության կազմակերպման իրավունքի տրամադրման համար։
Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) մրցույթի մասնակցության հայտ (Ձև 2),
2) սննդի ոլորտում համապատասխան գործունեության կազմակերպման իրավունքի փաստաթղթի պատճենը,
3) հիմնադրի փաստաթղթերի և պետական գրանցման վկայականի պատճենները, պետական գրանցման համարը (իրավաբանական անձանց համար), իսկ ֆիզիկական անձանց համար՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը։

«ՀՀ Արագածոտնի մարզի Օհանավանի Ս. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում սովորողների սննդի կազմակերպման համար վարձակալության տրամադրվող գույքի վարձավճարի շուկայական գնահատված արժեքը՝ ըստ գնահատման մասին հաշվետվության կազմում է.

Ամսական վարձակալության շուկայական արժեքը՝ ***15050 (տասնհինգ հազար հիսուն)*** ՀՀ դրամ

Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմում 2024 թվականի մարտի 12-ից մինչև մարտի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 14:00-ից մինչև ժամը 17:00, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից։

Մրցույթը տեղի կունենա 2024 թվականի մարտի 28-ին՝ ժամը 11:00-ին ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմում։

Մրցույթին մասնակցել ցանկացողները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն (հասցե՝ ք. Աշտարակ, Վ. Պետրոսյան 4), հեռախոսահամար՝ (0232) 33870, էլ. փոստի հասցե՝ (aragatsotn.krtutyun@mta.gov.am):

Ձև N 2

ՀԱՅՏ

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՆՆԴԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

_____

(հայտը ներկայացնող անձի անունը, ազգանունը (անվանումը)

1. Ծանոթանալով «____» _____2024 թ-ին կայանալիք

_____ ՊՈԱԿ-ում սննդի ոլորտում

(հաստատության անվանումը)

գործունեության կազմակերպման իրավունքի տրամադրման մրցույթի վերաբերյալ հրապարակված տեղեկություններին՝ ցանկանում եմ մասնակցել մրցույթին։

2. Վավերապայմաններ՝

_____

(իրավաբանական անձի գտվելու վայրը (ֆիզիկական անձի բնակության վայրը), հեռախոսահամարը)

3. Կից ներկայացնում եմ.

1) սննդի ոլորտում համապատասխան գործունեության կազմակերպման իրավունքի փաստաթղթի պատճենը,
2) հիմնադրի փաստաթղթերի և պետական գրանցման վկայականի պատճենները, պետական գրանցման համարը (իրավաբանական անձանց համար), իսկ ֆիզիկական անձանց համար՝ անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը։

Հայտատու _____ _____

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

«____» _____2024թ.